ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի դեկտեմբերի 26-ին

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 47. Բժշկական հետազոտումը

1. Անձը, որի նկատմամբ կան բավարար հիմքեր կասկածելու, որ տառապում է թմրամոլությամբ, գտնվում է թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ազդեցության տակ կամ առանց բժշկի նշանակման օգտագործում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ուղարկվում է բժշկական հետազոտման:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտումը կատարում են առողջապահության բնագավառի իրավասու մարմինները՝ բուժազննության արդյունքների կամ անձի կամավոր դիմումի հիման վրա: Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք ենթակա են պարտադիր հետազոտման և բուժման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտման ուղարկելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտությունն~~ան~~ իրականացվում է առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում:

~~Ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով~~:

Հոդված 49. Թմրամոլներին ցուցաբերվող բժշկական օգնությունը

1. Բժշկական օգնությունը թմրամոլներին ցուցաբերվում է սույն օրենքի 47-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին համապատասխան:

2. Մինչև 14 տարեկան անչափահասներին բժշկական օգնությունը ցուցաբերվում է նրանց օրինական ներկայացուցիչների դիմումով, իսկ 14-ից 18 տարեկան անչափահասներին՝ նրանց համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Բժշկական օգնությունը (կամավոր, պարտադիր և հարկադիր) ցուցաբերվում է դրա կարիքն ունեցող այն թմրամոլությամբ հիվանդին, որն առանց բժշկական նշանակման, կանոնավոր գործածում է թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ձեռք է բերել ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն, բժշկական հետազոտման արդյունքում ստացել է «թմրամոլություն» ախտորոշումը, սակայն ի վիճակի է, թեկուզ ժամանակավորապես, ինքնուրույն հաղթահարել թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործելու ֆիզիոլոգիական, հոգեբանական կախվածությունը:

4. Անհետաձգելի (պարտադիր, հարկադիր) բժշկական օգնությունը ցուցաբերվում է դրա կարիքն ունեցող թմրամոլությամբ հիվանդին, եթե նա առանց բժշկական նշանակման անընդհատ գործածում է թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ձեռք է բերել

անդառնալի, ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն, բժշկական հետազոտման արդյունքում ստացել է «թմրամոլություն» ախտորոշումը և ի վիճակի չէ, թեկուզ ժամանակավորապես, առանց բժշկական միջամտության հաղթահարել թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործելու ֆիզիոլոգիական, հոգեբանական կախվածությունը:

5. Այն թմրամոլների նկատմամբ, որոնք գտնվում են բժշկական հետազոտության ներքո և առանց բժշկի նշանակման շարունակում են օգտագործել թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, որոնք դատապարտվել են հանցագործություն կատարելու համար և կարիք ունեն բուժման, դատարանի որոշմամբ կարող են նշանակվել հարկադիր բուժման միջոցներ:

6.~~—~~Թմրամոլությամբ հիվանդները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս օգտվում են պացիենտների, ~~հիվանդի իրավունքներից՝ քաղաքացիների առողջության պահպանման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան~~, ինչպես նաև ապահովագրված անձանց իրավունքներից իրավունքներից՝ քաղաքացիների առողջության պահպանման, ներառյալ առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտը կարգավորող օրենսդրության համապատասխան:

7.~~—~~Պետությունը~~—~~առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում թմրամոլությամբ հիվանդներին երաշխավորում է~~ կառավարության սահմանած կարգով անվճար կամ արտոնյալ պայմաններով~~ բժշկական օգնության և սպասարկում~~ ցուցաբերում, որը ներառում է հետազոտում, խորհրդատվություն, ախտորոշում, բուժում և բժշկասոցիալական վերականգնում~~:

(49-րդ հոդվածը փոփ. 08.09.08 ՀՕ-158-Ն, լրաց. 25.10.10 ՀՕ-159-Ն)

Հոդված 50. **Թմրամոլությամբ հիվանդների բժշկական դիտարկումը և հաշվառումը** ~~**Առողջապահական հիմնարկների գործունեությունը թմրամոլությամբ հիվանդներին բժշկական օգնություն ցուցաբերելիս**~~

~~1. Պետությունն առողջության~~ համընդհանուր~~ ապահովագրության շրջանակում աջակցում է թմրամոլների հետազոտմանը, կոնսուլտացիային, բուժմանը և բժշկասոցիալական վերականգնմանը:~~

~~2~~. **Թմրամոլությամբ հիվանդների** ~~Թմրամոլների նկատմամբ~~ բժշկական դիտարկման և նրանց հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: